Դատարանը գտնում է, որ բացակայել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի՝ <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 121-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին <<Աննարկա>> ՍՊԸ-ի մասնակցության իրավունքի սահմանափակման հիմքը:

Նման պայմաններում արձանագրելով, որ սույն դեպքում չի ապացուցվում <<ԵԲԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-24-3>> ծածկագրով գնման ընթացակարգին <<Աննարկա>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու մասին որոշման հիմքում ընկած հանգամանքների և որոշման ընդունման օրենքով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերը, որոնց ապացուցման պարտականությունը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.10-րդ հոդվածով սահմանված կարգով կրում է Պատասխանողը, ուստի Դատարանը գտնում է, որ դրա բացասական հետևանքը պետք է կրի պատասխանող՝ <<Երևան>> բժշկագիտական կենտրոն ՓԲԸ-ն:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Դատարանը գտնում է, որ <<Աննարկա>> ՍՊԸ-ի հայցն ընդդեմ <<Երևան>> բժշկագիտական կենտրոն ՓԲԸ-ի՝ գնահատող հանձնաժողովի որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հիմնավոր է և ենթակա է բավարարման:

<u>6. Դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ</u>

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Դատարանն արձանագրում է, որ սույն գործով Հայցվոր կողմից նախապես վճարվել է հայցադիմումի ներկայացման համար անհրաժեշտ՝ 49.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումարը, իսկ հայցը բավարարվում է, ուստի Դատարանը գտնում է, որ <<Երևան>> բժշկագիտական կենտրոն ՓԲԸ-ից պետք է հօգուտ <<Աննարկա>> ՍՊԸ-ի բռնագանձել 49.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-9-րդ, 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ և 362-րդ հոդվածներով, Դատարանը

ՎՃՌԵՑ

1. <<Աննարկա>> ՍՊԸ-ի հայցն ընդդեմ <<Երևան>> բժշկագիտական

կենտրոն ՓԲԸ-ի՝ գնահատող հանձնաժողովի որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել.

անվավեր ճանաչել <<ԵԲԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-24-3>> ծածկագրով էլեկտրոնային գնումների e-AUCTION համակարգի միջոցով իրականացվող էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի՝ 1-ին չափաբաժնի մասով հաղթող մասնակից ճանաչված <<Աննարկա>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու մասին 27.08.2024 թվականի թիվ 6 արձանագրությամբ որոշումը:

2. <<Երևան>> բժշկագիտական կենտրոն ՓԲԸ-ից հօգուտ <<Աննարկա>> ՍՊԸ-ի բռնագանձել 49.000 (քառասունինը հազար) ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am